ԱՐՑԱԽ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

Կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի պլենումը քննարկեց մարզային կենտրոնի կուսակցական կազմակերպության խնդիրները, որոնք բխում են Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը վերամիավորելու մասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի որոշումից:

Զեկուցողը՝ կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Վ. Աթաջանյանը, ինչպես նաև մտքերի փոխանակությամբ ելույթ ունեցողները՝ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի բաժնի վարիչի տեղակալ Է. Պետրոսյանը, № 10 դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը, ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ Մ. Միրզոյանը, կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղար Հ. Մելքումյանը և մյուսները, մասնավորապես նշեցին, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ ըստ էության նախատեսվում է ինքնավար մարզը վերստին բռնությամբ վերադարձնել Ադրբեջանի իշխանության ներքո՝ ԼՂԻՄ-ի բնակչության գերակշիռ մեծամասնության պարզորոշ արտահայտած կամքին հակառակ, որը բազմիցս հավաստված ու պատշաճ կերպով գրանցված է նրա ներկայացուցչական մարմինների որոշումներում: Մինչդեռ այդ փաստաթուղթն ընդունված է միջազգային իրավական ու բարոյական նորմերի անաքող կոպիտ խախտումներով: Այդպիսով, Արցախի հայ ժողովրդի բախտը վերստին դրվեց նրա իշխանության ներքո, ով արդեն մեկ անգամ չէ, որ ճակատագրական դեր է խաղացել դրանում:

Հերթական անգամ կենտրոնի թույլ տված սխալը շտկվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի կողմից, որոնք, առաջնորդվելով ազգերի ինքնորոշման իրավունքի համամարդկային սկզբունքով և ելնելով բռնությամբ բաժանված իր երկու մասերը վերամիավորելու հայ ժողովրդի օրինական ձգտումից, ընդունեցին միակ արդարացի համատեղ որոշումը՝ վերամիավորելու Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը:

Պլենումը դատապարտեց և անընդունելի համարեց երկրի Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին, այն, միջազգային սահմանադրական իրավունքի նորմաներին համապատասխան, որակելով որպես բռնակցման նոր ձեռնարկում:

Նկատի առնելով մարզային կենտրոնի կոմունիստների գերակշիռ մեծամասնության կամքի ազատ դրսևորումը, որը արտացոլված է սկզբնական կուսկազմակերպությունների ժողովների որոշումներում, պլենումը որոշեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմին խնդրել Ստեփանակերտի քաղաքային կուսկազմակերպությունն ընդունելու Հայաստանի կուսակցական կազմակերպության կազմի մեջ, որոշմամբ նախատեսելով կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի վերականգնման մեխանիզմ:

Պլենումում որոշվեց բոլոր անհրաժեշտ միջոցներն իրականացնել Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քաղաքական, տնտեսական ու մշակութային կառուցվածքները միասնական պետական-քաղաքական համակարգի մեջ միահյուսելու համար:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ